

**ՏՈՒՆ ԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՇՏՆ ԱՐՏԱՅՈՒՈՂ  
ԲԱՌԱՆՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՊԱՏԿԵՐՈՂ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ  
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ<sup>1</sup>**

Արագածոտնի մարզի Աշտարակի, Ապարանի, Թալինի, Արագածի շրջանների 72 համայնքներում բնակվում են ն՛ դարերով այստեղ ապրած հայերի, ն՛ 1828-30-ական թվականներին Արևմտյան Հայաստանից՝ Ալաշկերտից, Մուշից, Վանից, ինչպես նաև՝ Հին Բայազետից, Խոյից և այլ վայրերից վերաբնակեցվածների սերունդներ: 20-րդ դարի երկրորդ տասնամյակի կեսերից այստեղ են հաստատվել նաև 1915 թվականի Հայոց ցեղասպանությունից փրկված սասունցիներ և մշեցիներ:

Արագածոտնի մարզի հիշյալ վարչական միավորներում գործառում են հիմնականում Սասունի, Արարատյան, Մշո, Ալաշկերտի, Խոյի, Բայազետի, մասամբ նաև Վանի, Մակուի բարբառները, ենթաբարբառներն ու խոսվածքները:

Արագածոտնի մարզ կազմակերպած մեր գիտարշավների արդյունքում արձանագրել ենք, որ Սասունի բարբառով խոսել են և այժմ էլ, թեև զգալի փոփոխություններով, շարունակում են խոսել Աշտարակի Ուջան, Սասունիկ, Ավան և Լեռնարոտ, ինչպես նաև Թալինի շրջանի Աշնակ, Իրինդ, Շղարշիկ, Վերին և Ներքին Սասնաշեն, Վերին և Ներքին Բազմաբերդ, Ագարակ, Պարտիզակ, Կաքավաձոր, Կաթնաղբյուր, Դիան, Ոսկեթաս, Զովասար, Դավթաշեն գյուղերի բնակիչները, որոնք ծագումով պատմական Հայաստանի Սասուն գավառից են:

---

<sup>1</sup> Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի ֆինանսավորմամբ՝ 18T-6B302 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում: Ծ

Մարզի բարբառային համապատկերում առանձնանում է նաև Արարատյան բարբառը, որը գործառում է այս տարածքի մի շարք բնակավայրերում (Աշտարակ ք., Օշական, Փարպի, Մուղնի, Կոշ գյուղեր և այլն):

Արագածոտնի մարզի Ապարանի և Արագածի շրջաններում գործառում է հիմնականում Մշո, Ալաշկերտի, մասամբ նաև Վանի, Բայազետի բարբառներն ու խոսվածքները:

Սույն հոդվածի շրջանակներում մենք կանդրադառնանք Արագածոտնի մարզում գործածվող «Տուն և տնտեսություն» իմաստային դաշտն արտացոլող առավել ուշագրավ բառանուններին, որոնցից առանձնացրել ենք *թոնրի օղանցքը, շենը, որմնախորշը և առաստաղը*:

Հիշյալ տարածաշրջանում «*թոնր օղանցք*» հասկացության բառանուններ են դիտարկվել *ակ, ագուգա, սընդու, ձորձ* բառանունները:

Հ.Աճառյանը *ակ* բառանունը համարում է բնիկ հայերեն բառ՝ հ.ե *ձկի* արմատից սերված: Գիտնականի կարծիքով՝ *ակը* գրաբարյան *ակն* արմատն է, որը բացի իր բուն մի քանի իմաստներից «զաւառակաների մէջ մի քանի նոր առումներով էլ հարստացած է. ինչպես «ջաղացքի անցք, թոնրի ծակ, ապուրի հատ»<sup>2</sup>:

Արագածոտնի մարզի բարբառային համապատկերի արևմտյան բարբառախմբի գերակշռող խոսվածքներում (Մասուն, Մուշ, Ալաշկերտ) *ակ* բառանունը՝ որպես թոնրի օղանցք, դրսևորված է *ակ* բառանվան *ագ, հ'ագ, ակ* հնչատարբերակներով, ինչպես նաև բառակապակցային *թունդրրի ագ, թօնրը ագ, թընդրրան ագ, թունդրրա ագ* տարբերակներով:

Ապարանի շրջանի մի խոսվածքում, որի բնակիչները Վանից են գաղթել, «թոնրի օղանցք» հասկացության դիմաց բացի *ակ* բառանունից, փաստված է նաև *ակուկա* ուշագրավ բառանունը:

Ըստ Հ.Աճառյանի՝ *ակուկա*-ն ջրի փողրակն է, «հողից թրծած Ո ձևով հենարան», որ թոնրի ակի մոտ են դնում և վառելիք փայտերը վրան

---

<sup>2</sup> Հ.Աճառյան, *Հայերեն արմատական բառարան* (այսուհետ՝ ՀԱԲ), հ.1, Ե., 1971, էջ 106-109:

դնում, նույն բառը Կարինում «թոնրի ծակ, սնդու» իմաստն ունի: Համարվում է ասորերենից փոխառյալ բառ՝ agōgā<sup>3</sup>: Կարծում ենք՝ Վանի բարբառին հատուկ այս բառանունը, որի նախնական նշանակությունն է եղել «ջրի կավե խողովակ», բառիմաստային ճյուղավորմամբ հիշյալ խոսվածքում այնուհետև ձեռք է բերել «թոնրի օղանցք» նշանակությունը:

Արագածոտնի մարզի սասունցիաբնակ որոշ գյուղերում (Մասունիկ, Ուջան), ինչպես նաև Ապարանի Նիգավան գյուղում (Քղի) արձանագրել ենք *ձորձ* (*ծորձ*, *ձորձ* հնչատարբերակովներով) բառանունը՝ որպես «թոնրի օղանցք» հասկացության բառանուն:

*Չորձը* «զգեստ» նշանակությունն ունի, սակայն բառի ծագումն անհայտ է: Ինչպես գիտենք, հաց թխելիս թոնրի օղանցքը փակել են որևէ շորով, որպեսզի թոնրի ջերմությունը դուրս չգա: Կարծում ենք՝ *ձորձ* բառանունը իմաստային զուգորդումների շնորհիվ է ձեռք բերել «թոնրի օղանցք» նշանակությունը:

*Սընդու*: Բարբառային *սընդու* բառանունը՝ որպես «թոնրի օղանցք», տարբեր մեկնաբանությունների առիթ է տվել: Գ.Զահուկյանը *սնդու* բառը ներկայացնում է որպես բարբառային հնաբանություն՝ այն կապելով հայերեն ընթացք, ընթանալ, վ.գերմաներեն sind «ընթացք, ուղի, ճանապարհ», և հ.-ե. sent- «ուղղվել, գնալ, ընթացք, ուղի, ճանապարհ» բառերի հետ<sup>4</sup>:

Նոր Հայկազեան բառարանի հավելվածում փաստված են *սնկուալ*, *սնկուարք*, *սնկվրկալիչ*, *սնտու* բառերը հետևյալ բացատրությամբ՝ որպես «խուփն կամ դըխաճն սընկուալի. Ծակ կամ խողովակ թոնրի ի ստորե՝ որպես ծխահանք. Ընդ որ արծաճանեն և գլխարկոյն լուցեալ ի նմա թոնրի մխանք, սօլուգլուգ<sup>5</sup>: Ո՛չ ՆՀԲ-ն, ո՛չ Հ.Աճառյանը բառի ծագումնաբանության մասին ոչինչ չեն տալիս: Միայն Հ.Աճառյանը Արաբկիրի բարբառի համար փաստում է *սնկուալ* բառը, որը

<sup>3</sup> Հ.Աճառյան, ՀԱԲ, հ.1, էջ 78:

<sup>4</sup> Գ.Զահուկյան, *Հայ բարբառագիտության ներածություն*, Ե., 1972, էջ 327:

<sup>5</sup> Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ.2, Վենետիկ, 1837, էջ 1066:

հիշատակված է նաև ՆՀԲ-ում: Գիտնականը վկայված *սնդկալի* համար հղում է անում *ակնկալ*-ին, այնուհետև՝ *ակ* -ին: Նկատի ունենալով վերը շարադրվածը՝ կարծում ենք, որ *սնկուալը սնդու* և *կալել* բառերի համադրումից առաջացած բառանուն է՝ *սնդուի կալիչ* իմաստով:

Ընդհանրապես բարբառներում *ազը կալել* արտահայտությունը շատ գործածական է: Հնարավոր է՝ այն լաթի կտորն է, որով փակել են թոնրի օդանցքը: Չմոռանանք նաև, որ հենց այս տարածաշրջանի որոշ խոսվածքներում *ձորձ* բառանունը փոխաբերացմամբ ձեռք է բերել «թոնրի օդանցք» նշանակությունը:

Ինչպես գիտենք, թոնրի օդանցքը օդը ներս մտնելու համար է նախատեսված, որպեսզի կրակը բորբոքվի, և երկար ժամանակ թոնիրը կրակ ունենա: Այսինքն՝ թոնրի օդանցքը կրակին սնունդ տալու միջոց է: Չենք բացառում նաև, որ *սընդու* կամ *սընտու* (ՆՀԲ-ում առկա է *սնտու* տարբերակը) բառանունը կարող է առաջացած լինել *ստնտու* կամ *սննդատու* բառանուններից՝ իբրև սնունդ տվող (Բ դեպ, ըստ Հ.Աճառյանի՝ սնունդը և ստինքը նույն արմատից առաջացած բառանուններ են):

*Սընդու* բառանվան տարածական շառավիղը Արագածոտնի մարզի բարբառային համապատկերում ներառում է Արարատյան բարբառի մի քանի խոսվածքները (Օշական, Փարպի, Մուղնի, Բյուրական (Երևանի մայլա), Աշտարակ և այլն):

**Շեմ:** *Շեմ* հասկացությունը հիշյալ տարածաշրջանում արտացոլված է հիմնականում *շեմ*, *սեմ*, *շեմգալ*, *դրրընդի* բառանուններով:

Գրաբարյան *անդ* բառաձևը Հ. Աճառյանը համարում է բնիկ հայերեն բառ՝ հնդեվրոպական ծագումով, որի ցեղակիցներ են սանս. *atā* (դռան շրջանակը), լատ. *antae* (դռան երկու կողմերի սյուները): *Սնդ*-ը՝ «սեամ, շեմք» իմաստով, առանձին անգործածական է, այն պահված է միայն *դրանդ*, *դրանդք*, *դրանդի* բառաձևերում: Իմաստն է նախադռո,

դրան գավիթ, մուտք կամ շեմք: Կազմված է դր-դուռ (հմմտ. դրացի) և հիշյալ անդ բառերից<sup>6</sup>:

Ապարանի շրջանում պահպանված է հնդեվրոպական անդ արմատից կազմված դրանդի բառաձևի դ՛ըրընդա հնչատարբերակով, բայց արդեն հասկացության ոչ լիարժեք իմաստով. դ՛ըրընդա բառաձևն ունի «դրան վերին շեմ» նշանակությունը:

Շեմ հասկացության դիմաց Արագածոտնի մարզի բարբառներում գործառող գուգաբանությունների հաջորդ բառախմբի առանցքը սեմ բառանունն է:

Ըստ Գ.Ջահուկյանի՝ արխագերենը հայերենի հետ շփման մեջ է եղել հին ժամանակներից սկսած, և շեմ-ն ու մի շարք այլ բառեր արդյունք են նրանց հեռավոր ցեղակցության և հնդեվրոպա-արխագ-ադրդեական հնագույն շփումների և «տարրական ցեղակցության» (մանկական բառեր, բնաձայնություններ, ձայնարկություններ): Գիտնականը հնարավոր է համարում սեամ (սեմ, շեամ, շեմ) բառի արևմտակովկասյան ծագումը, թեև կարծում է՝ նմանությունը կարող է և պատահական լինել<sup>7</sup>:

Հայերենի բարբառներում այն դրսևորված է և՛ սեմ (գրաբարյան սեամ-ից), և՛ ս->շ անցումով համեմատաբար ուշ առաջացած շեմ տարբերակով: Շեմ բառը սիմ հնչատարբերակով արձանագրել ենք Աշտարակի շրջանի Ավան գյուղում (վերջիններս Սասունի Իշխանաձոր գյուղից են):

Հիշյալ տարածքում շեմ հասկացության դիմաց գրեթե համընդհանուր կիրառություն ունի նույն շեմ բառանունը: Այն դրսևորված է ե-ի երկբարբառային արտասանությամբ՝ շեմ, Ապարանի, Թալինի, Արագածի որոշ խոսվածքներում:

Արագածոտնի մարզի սասունցիաբնակ որոշ գյուղերում առկա է նաև շեմ բառի շեմիկ՝ իկ ածանցով բառակազմական տարբերակը (Սասունի Ընգուզնակ, Մաղդուն, Մշո Մկրագոմ գյուղերից գաղթածները՝ շեմիգ):

---

<sup>6</sup> **Զ. Աճառյան**, *Հայերեն Արմատական բառարան*(այսուհետև՝ ՀԱԲ), հտ. 1, Ե., 1971, էջ 186:

<sup>7</sup> **Գ. Ջահուկյան**, *Հայոց լեզվի պատմություն, Նախագրային ժամանաշրջան* (այսուհետև՝ ՀԼՊ. ՆԺ), Ե., 1987, էջ 602:

Շեմ+կալ արմատների բառաբարդմամբ առաջացած *շեմակալ* բառանունը իր հնչյունական տարբերակներով, ըստ մեր դիտարկած նյութերի, ընդգրկում է Մուշ-Տիգրանակերտի բարբառախումբը:

*Միմզալ* հնչաձևով վկայված է Թալինի Վերին Բազմաբերդ (Մասունի Շադախի Գյարմալ գ.), Իրինդ (Մասունի Մեմալ գ.), *սեմզալ*՝ Ներքին Սասնաշեն (Մասունի Փասնք գավառի Մըշկեդ գ.), *սըմզըլ*՝ Աշտարակի Ուջան գ (Մասունի Խարլոզգի շրջանի Կուսկետ գ) գյուղերում: **Որմնախորշ**: Սենյակում պատի մեջ թողած՝ երեսը բաց պահարան հասկացության բառանուններից Արագածոտնի մարզում առկա են *ակնատ, պարրբիան, պատուխան, դոլաբ, թ<sup>օ</sup> րեք* բառաձևերը:

*Ակնատ*-ը բնիկ հայերեն բառ է, որն առաջացել է *ակն* (աչք) և *հատ*(ել) բաղադրիչների բառաբարդումից: Հ. Աճառյանը վկայակոչում է *ակնատ* բառի գավառական ձևերը՝ *ակնատ, հակնատ*, որոնք բարբառներում հանդես են գալիս թռչուն որսալու ցանց, ինչպես նաև *ակնատ*՝ պատի մեջ բացված դարան կամ սենյակից սենյակ բացված փոքր պահարան նշանակությամբ<sup>8</sup>:

*Ակնատ* բառանունը «որմնախորշ» իմաստով արձանագրել ենք Աշտարակի Տեղեր (*ակնատ, հակնատ*), Անտառուտ (*ակընատ*), Օհանավան (*ակնատ/պատուխան*) գյուղերում:

Ապարանի և Արագածի շրջանի որոշ գյուղերում որպես որմնախորշ հասկացության բառանուն վկայված են նաև *ակն* արմատից սերված *աճգունկ, աճկոճ* բառանունները: Ինչպես հայտնի է, *աչք* բազմիմաստ բառն ունի նաև «դարակ» նշանակությունը, և բարբառային հայերենում *աչկունք* բառանունը *աճք* բառի բառիմաստային ճյուղավորմամբ առաջացած բառանուն է՝ սենյակում պատի մեջ թողած, երեսը բաց պահարան՝ դարակ իմաստով: Ապարանի Արագած և Ատմա գյուղերում վկայված է *աճգունկ*, Արագածի Վարդաբլուր գյուղում՝ *աչքունք* (գուգահեռ նաև՝ *փանջարա*) բառանունները: Արագածի շրջանի Մելիք գյուղում (գաղթածներ Ալաշկերտի գյուղերից) արձանագրել ենք *աճկոճ, աճկոնճ* բառանունները՝ «որմնախորշ» նշանակությամբ: Ի դեպ, հիշյալ գյուղում առկա է նաև *ագնաղ* բառանունը, սակայն «պատի մեջ հաղորդակցման համար բաց արած անցք» իմաստով:

<sup>8</sup> Հ. Աճառյան, ՀԱԲ, հտ. 1, Ե., 1971, էջ 109:

Հայերենի բարբառների մի սովոր մասում որմնախորշ իմաստով գործածվել է *պատրիան* բառանունը: Հ. Աճառյանը *պատուհանի* համար ներկայացնում է երկու իմաստ՝ 1. լուսամուտ, 2. պատի մեջ պահարան:

Ըստ Ջահուկյանի՝ *պատուհան* բառի հին ձևը *պատուրհան*-ն է՝ առաջացած իրանական *paturhānā* (*pati-frāna*) ձևից<sup>9</sup>:

Լ. Հովհաննիսյանը նշում է, որ *պատուհան* բառի իրանական ծագման փաստարկումներ կան որոշ իրանագետների մոտ: Գիտնականը ավելի հավանական է համարում Բենվենիստի բացատրությունը. «Միջին իրանական *pātrās*-ի համաբանությամբ՝ հյ. *պատուհան*, տեսնում է միջ. իրանական *\*pātrfān* < *\*pāti.pāna*. *\*frāna*, սնս. *prāna*, «փչել» *\*patifrana* կազմության մեջ տեսնելով «օդանցք, լուսամուտ» իմաստը (*BSL*, 1963,63), մանավանդ որ *\*patifrana*-ի համապատասխանությունը ակնհայտ է հատկապես *պատուհանի պատրիան* տարբերակի հետ, որն ավելի հին ձև է և պահպանված է նաև արդի որոշ բարբառներում»<sup>10</sup>:

*Որմնախորշ* հասկացության դիմաց Արագածոտնի մարզում փաստել ենք *պատրիան* և *պատուհան* բառանունները: *Պատրիան* տարբերակը գործառու է հիմնականում արևելյան բարբառներում և խոսվածքներում (Փարպի, Մուղնի գյուղեր՝ *պատրիան*, Օշական, Կոշ գյուղեր՝ *պրտրիան*):

Ապարանի շրջանում ապրող ալաշկերտցիների և վանեցիների խոսվածքներում գործածվում է *պատուհան* բառի *պատուխան* (*h>խ*) հնչատարբերակը: Թալինի խոսվածքում՝ *պատուհան*:

Հիշյալ տարածաշրջանում «պատի մեջ պահարան» նշանակությամբ հիշատակելի է նաև *ծալքատեղ* բառանունը, որը Արարատյան բարբառի խոսվածքներում գործածվում է իմաստային որոշակի տարբերակմամբ: Օրինակ՝ Օշականի խոսվածքում *պրդրիանը* պատի մեջ փոքր պահարանն է, իսկ *ծալքատեղը*՝ մեծը, որը ծառայում է անկողին պահելու համար:

Մեկ այլ ուշագրավ բառանուն էլ արձանագրել ենք Աշտարակի Լեռնարոտ գյուղում (Մասունի Գելիեգուզան գյուղից գաղթածներ): Տվյալ բարբառին բնորոշ *ագնաղ*, *շրբաք* բառանուններից բացի գործառել են նաև

---

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 540:

<sup>10</sup> Լ. Հովհաննիսյան, *Հայերենի իրանական փոխառությունները*, Ե., 1990, էջ 257:

բաղաչք բառանունը՝ այսինքն՝ պատի աչք, որը բարբառի յուրօրինակ լեզվամտածողությամբ ձևավորված բառանուն է :

Պատի մեջ թողած, երեսը բաց պահարան իմաստով Արագածոտնում առկա է նաև *թարեք* (նաև՝ *թարեկ*, *թարիկ* հնչյաձևերով) բառանունը, որը *դարակ* բառի բարբառային տարբերակն է: Բառը համարվում է իրանյան փոխառություն՝ պիլ. *darān* ձևից առաջացած<sup>11</sup>: Այն գործածական է հատկապես Ապարանի, մասամբ նաև Թալինի խոսվածքներում:

Պարսկերենից փոխառյալ *դոլաբ* բառանունը՝ որպես որմնախորշի նշանակելի, գործածական է Բյուրականի, Ապարանի շրջանի Ձորագլուխ գյուղերի խոսվածքներում:

Պարսկական փոխառություն համարվող *փանջարա* բառանունը հիշյալ տարածաշրջանում գործածվում է որպես որմնախորշ հասկացության նշանակելի: Այն վկայված է Թալինի Ակունք, Ապարանի Ծաղկաշեն գյուղերում:

Արագածոտնի մարզի սասունցիաբնակ գյուղերում գործառում է նաև արաբերենից փոխառյալ *շրբաք* (նաև՝ *շրբակ*) բառանունը:

Աշտարակի Ուջան գյուղի (Սասունի Հազգո գյուղից գաղթածներ) խոսվածքում հանդիպում է *պրդնորտ* բառանունը՝ քննության առարկա իմաստով: Ենթադրում ենք այն *պահնորդ* բառի բարբառային մի տարբերակ է:

**Առաստաղ:** Այս հասկացության բարբառային գուգաբանություններից Արագածոտնի մարզում տարածական ընդգրկումով գործածական են *առիք*, *օջորք* բառանունները:

Հ. Աճառյանը *առիք*-ը համարում է բնիկ հայերեն բառ՝ հնիս. *stel - դնել, զետեղել, բարձրացնել, կանգնեցնել, ցից, սյուն, յենարան* արմատից՝ *առ* մասնիկով<sup>12</sup>: Գ.Ջահուկյանը *առիք* (*առաստաղ*) բառի ստուգաբանությունը կասկածելի է համարում իմաստային զգալի տարբերության պատճառով<sup>13</sup>:

Թալինի, Ապարանի, Արագածի, մասամբ նաև Աշտարակի խոսվածքներում գործածվում է հիմնականում *առիք* բառանունը՝ *հառիք* (Ապարան՝ Վանից գաղթածներ 1828-1829 թթ), *հ՛առիք* (Աշտարակի Կարբի, Ուշի, Ապարանի Ծաղկաշեն գյուղեր), *հառիք* (Աշտարակի Տեղեր

<sup>11</sup> Հ.Աճառյան, ՀԱԲ, հտ. 1, էջ 633:

<sup>12</sup> Հ.Աճառյան, ՀԱԲ, հտ. 1, էջ 254:

<sup>13</sup> Գ.Ջահուկյան, ՀԼՊ. ՆԺ, էջ 188-189:



գ.), *անիկ* (Ուջան, Մասունիկ գյուղեր), (Ապարանի Ձորագլուխ գ.), *հանինք* (Աշտարակի Ավան գ.՝ Մասունի Իշխանաձորից), *հ° ոիկ* (Թալինի Ակունք գ.), *անինկ(ք)* (Աշտարակի Ավան, Լեռնարոտ գյուղեր) հնչյունական տարբերակներով: Հիշյալ տարածքում Մուշի և Ալաշկերտի խոսվածքներում տան հիմնավոր մաքրություն իմաստով գործածվում են *անիք* բառից ձևավորված *պատուհանիք* կամ *պատհանիք*, իսկ Բայազետի բարբառով խոսող Կարբի և Քուչակ գյուղերում գործառուս են *ավելխօրթ*, *խօրթուսուրփ անել* յուրօրինակ բառաձևերը:

Թալինի Ներքին Մասնաշեն գյուղի խոսվածքում որպես առաստաղ հասկացության նշանակելի արձանագրել ենք *արկեղազ* յուրօրինակ բառանունը, որը, կարծում ենք, ամենայն հավանականությամբ *անիքի տակ* բառակապակցությունից բաղադրված բառանուն է:

*Օջորք*: Հ.Աճառյանի կարծիքով՝ *օջորք* բառը սերտ աղերսներ ունի *աճառ* արմատի հետ, որը, ըստ նրա, արաբական փոխառություն է՝ *اِسْجَار* «տանիք»<sup>14</sup>:

Միջին հայերենում արդեն գործածվում է *ոճոռք* բառը՝ իբրև առաստաղ:

*Առաստաղ* հասկացության *օջորք* բառանունը Արագածոտնի մարզում վկայված է գերազանցապես Արարատյան խոսվածքներում՝ Փարպի, Կոշ, Օշական, Աշտարակ և այլն:

Այսպիսով՝ Արագածոտնի մարզի բարբառային բառապաշարում գործառող «Տուն և տնտեսություն» իմաստային դաշտն արտացոլող որոշ բառանունների բարբառային դրսևորումները քննելիս եկել ենք այն եզրահանգման, որ հիշյալ տարածքի բարբառները և խոսվածքները պահպանել են բնիկ հայերեն այնպիսի բառանուններ, ինչպիսիք են *սկանաստը*, *դրանդին*, *անիքը*: Արագածոտնի մարզի խոսվածքները ևս անմասն չեն մնացել փոխառություններից, որոնց մեջ կան ինչպես հին (*շեմ*, *օջորք*, *պատրհան*), այնպես էլ նոր փոխառություններ (*շրբակ թարեք*, *դոլաբ* և այլն):

**Hasmik Khachatryan.** -Dialectal representation of words expressing the semantic field of house and household in the Aragatsotn region.

<sup>14</sup> Հ. Աճառյան, ՀԱԲ, հտ. 1, էջ 140:

In this article, we have studied the dialectal versions of the words “*tandour (eastern stove and oven) air shaft, threshold, niche, and ceiling*” reflecting the semantic field of “house and household” in the Aragatsotn region, such as:

1. **tandour** (eastern stove and oven) **air shaft** (*թոնրի օղանցք*) - *սլ* [ak], *սգուգա*, [aguga], *սընդու* [syndu], *ձորձ* [dzordz]
2. **threshold** (*շեմ*,) - *շեմ* [shem], *սեմ*, [sem], *շեմգալ* [shemgal], *դըրընդի*, [dyryndi]
3. **niche** (*սրվնախորշ*) - (open cabinet in the wall of the room) *սկնատ*, [aknat], *սատրըրհան* [patryhan], *սատուխան* [patukhan], *դոլաբ* [dolab], *թ° րէք* [tareq]
4. **ceiling** (*սաաստաղ*) - *սոհր* [ariq], *սոհր* [ojorq].

Асмик Хачатрян - Диалектная панорама лексем, отражающих смысловое поле «дом и домашнее хозяйство», в Арагацотнской области. В рамках данной статьи мы рассмотрели употребляющиеся в Арагацотнской области диалектные варианты, отражающие смысловое поле лексем «дымоход тонира», «порог», «ниша» и «потолок», среди которых: 1. **թոնրի օղանցքի** (тонри оданцк - дымохода тонира) — *սլ* (ак), *սգուգա* (агуга), *սընդու* (сэрэнду), *ձորձ* (ձորձ); 2. **շեմի** (шем - порога) — *շեմ* (шем), *սեմ* (сем), *շեմգալ* (шемгал), *դըրընդի* (ժըրընդի); 3. **սրվնախորշի** (вормнахори - открытой ниши в стене – шкафа) — *սկնատ* (акнат), *սատրըրհան* (սատրհան), *սատուխան* (սатухан), *դոլաբ* (долаб), *թ° րէք* (միք); 4. **սաաստաղի** (арастаг – потолка): *սոհր* (арик), *օջորր* (օձջօրк).